ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Վայոց Ձոր մարզ
ք.Վայք, index, 3801, Շահումյան 18

04.02.2016թ.
ԹԻՎ 11

<Գնումների աջակցման կենտրոն> ՊՈԱԿ-ի
պետ պարոն Մ. Անանյանին
(ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 54բ)

Հարգելի՛ պարոն Անանյան,

Ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի՝ 20.01.2016թ. թիվ 01/16 որոշման՝ հայտնում եմ Ձեզ, որ պատվիրատուն՝ ՀՀ Վայոց Ձոր մարզի Վայքի քաղաքապետարանը, դադարեցրել է <ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2015թ. թիվ 2 արձանագրությամբ <Նոր-Էներջի> ՍՊԸ-ի հայտն ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ նույն ընթացակարգի հետ կապված կա բողոք <Մավշին> ՍՊԸ-ի կողմից, որի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել, գնահատող հանձնաժողովը ժամանակավորապես կասեցրել է <Նոր Էներջի> ՍՊԸ-ի հետ բանակցությունները:

Վայքի քաղաքապետ՝ Ա. Սաղաթելյան

Արձանագրություն թիվ 3

<ՎՔ - ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15>

ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Վայք

27 հունվարի 2016թ.
ժ. 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ Ա. Սմբատյան
Հանձնաժողովի անդամներ Գ. Մուշկամբարյան, Ռ. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար Ն. Մարկոսյան

1. <Նոր-Էներջի> ՍՊԸ-ի հայտում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հայտը հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու մասին

Ա. Սմբատյան

Հիմք ընդունելով Գնումների բողոքարկման խորհրդի 20.01.2016թ. թիվ 01/16 որոշումը՝ դադարեցնել Վայքի քաղաքապետարանի կողմից <ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15> Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը <Նոր-Էներջի> ՍՊԸ-ի հայտում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հայտը հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

(Ընդունվե է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0):

2. <Նոր-Էներջի> ՍՊԸ-ի հետ բանակցությունները ժամանակավորապես կասեցնելու մասին

Ա. Սմբատյան

Հաշվի առնելով, որ սույն Ընթացակարգի հետ կապված կա բողոք <Մավշին> ՍՊԸ-ի կողմից, որի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել, ժամանակավորապես կասեցնել <Նոր-Էներջի> ՍՊԸ-ի հետ բանակցությունները:

(Ընդունվե է որոշում կողմ՝ 3; դեմ՝ 0):

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սմբատյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մուշկամբարյան

Ռ. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Մարկոսյան